ԵՐԲ ԱՄԵՆ ԻՆՉ ԻՆՁ ՀԱԿԱՌԱԿ Է

Ինչպես է Աստված հոգում մեր կարիքները
Մաս 9
Բ Մնացորդաց 20:1-30

Եհովա Նիսի = Ես եմ քո պաշտպանող Աստվածը

1- Առաջ Աստծուն դիմեմ

«Դրանից հետո մովաբացիներն ու ամմոնացիները, նրանց հետ նաև մաոնացիներից էլ մարդիկ եկան Հոսափատի դեմ պատերազմելու...Հոսափատը վախեցավ, երեսն ուղղեց դեպի Տերը՝...:» Համար 1, 3

2- Աստծո հետ խոսեմ իմ դրության մասին

«Հոսափատը կանգնեց Հուդայի և Երուսաղեմի հավաքված ժողովրդի մեջ և ասեց (աղոթեց)...» Համար 5

- **Ինձ հիշեցնեմ որ Աստված ով է**

«Դու չէ՞ս այն Աստվածը, որ բնակվում է երկնքում և տիրում է ազգերի բոլոր թագավորությունների վրա. քո ձեռքում են զորությունն ու ուժը, և ոչ ոք չի կարող քո դեմ կանգնել:» Համար 6

- **Ինձ հիշեցնեմ որ նա անցյալում ինչեր է արել**

«Չէ՞ որ դու, ո՛վ մեր Աստված, քշեցիր այս երկրի բնակիչներին Իսրայելի քո ժողովրդի առջևից...» Համար 7

- **Աստծուն խնդրեմ որ հիմա ինձ օգնի**

«Ով մեր Աստված, մի՞թե նրանց չես դատելու...» Համար 12ա

3- Աստծուն հայտնեմ զգացումներս

«Մենք <u>զորություն չունենք</u> դեմ կանգնելու այս մեծ բազմությանը որ եկել է մեզ վրա:» Համար 12բ

4- Աստծուն վստահեմ որ ինձ օգնելու է

«Մենք չգիտենք, թե ի՛նչ անենք, որովհետև մեր աչքերը քեզ են ուղղված:» Համար 12գ

Աստծո Պատասխանը

«Տերը ձեզ այսպես է ասում. "Մի՛ վախեցեք և մի՛ զարհուրեք այս մեծ բազմությունից, որովհետև <u>պատերազմը ձերը չէ, այլ՝ Աստծունը</u>:» Համար 15

«<u>Դուք այս անգամ չեք պատերազմելու</u>. դուք <u>մնացե՛ք</u> ձեր տեղում, <u>սպասե՛ք</u> և կտեսնեք Տիրոջ փրկությունը ձեզ համար:» Համար 17

5- Նախորոք գոհանամ Աստծուց

«Տիրոջ համար երգիչներ և սուրբ փառքը օրհնաբանողներ կարգեց, որոնք, ընթանալով սպառազինյալների առջևից, ասում էին. «Գոհացե՛ք Տիրոջից, որովհետև հավիտյան է նրա ողորմությունը:» Համար 21

«Երբ սկսվեց նրանց ցնծության երգն ու օրհնաբանությունը, Տերը դարան դրեց ամմոնացիների ու մովաբացիների և Սեիր լեռան բնակիչների դեմ, որոնք եկել էին Հուդայի վրա հարձակվելու, և նրանք կոտորվեցին:» Համար 22

«Աստծու երկյուղն ընկավ մյուս երկրների թագավորությունների վրա, երբ լսեցին, թե Տերը պատերազմել է Իսրայելի թշնամիների դեմ: Հոսափատի թագավորությունը խաղաղ մնաց, և Աստված հանգստություն տվեց նրան ամեն կողմից:» Համար 29-30